

Հաստատված է
ՀԱԱՀ գիտական խորհրդում
„12“, „03“ 2020թ.
(արձանագրություն № 7)



Վավերացնում են
Վ. Ուռուտյան
2020թ.

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ
ԿԱՐԳ**

I. Ը ն դ հ ա ն ու թ դ թ ու յ թ ն ե թ

1. Սույն կարգով (այսուհետ՝ Կարգ) սահմանվում են «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ կամ Համալսարան) մագիստրատուրայի ընդունելության պայմանները:
2. Մագիստրատուրան բարձրագույն մասնագիտական կրթության համակարգի կրթական աստիճան և բարձր որակավորում ունեցող կադրերի պատրաստման ձև է:
3. Մագիստրատուրայում կարող է սովորել բակալավրի, դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի աստիճան ունեցող անձը մասնագիտական գիտելիքները խորացնելու, վերամասնագիտանալու, ինքնուրույն գիտական ուսումնասիրություններ կատարելու, մասնագիտական գործնական, նորարարական, տեխնոլոգիական զարգացումներ ու նոր հնարավորություններ ընկալելու ունակություններ ձեռք բերելու և մագիստրոսի որակավորման աստիճան ստանալու համար:

2. Մագիստրատուրայի ընդունելության մրցույթի անցկացման և ընդունող հանձնաժողովի ձևավորման պայմանները

4. Համալսարանի կողմից տեղեկատվական հարթակների միջոցով տրվում է հայտարարություն՝ մագիստրատուրայի ընդունելության կարգի, մասնագիտությունների և տեղերի վերաբերյալ:
5. Մագիստրատուրայի ընդունելության անցկացման համար, Համալսարանի ռեկտորի հրամանով և նախագահությամբ ստեղծվում է ընդունող հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը, ֆակուլտետների դեկանները, ինչպես նաև բուհի այլ աշխատակիցներ:
6. Ընդունող հանձնաժողովը ուսումնասիրում և քննարկում է ֆակուլտետների դեկանների կողմից ներկայացրած մրցույթի հավակնորդների ցուցակները և ըստ մասնագիտությունների, բազային կրթության ընթացքում ուսումնասիրած դասընթացների ցանկի հաշվառմամբ, իրականացնում է մրցույթ:
7. Համալսարանի ռեկտորը ընդունող հանձնաժողովի կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա հրամանագրում է մրցութային հիմունքներով մագիստրատուրա ընդունված դիմորդներին:

3. Մագիստրատուրայի ընդունելությունը

8. Մագիստրատուրա մրցութային կարգով կարող են ընդունվել բակալավրի, դիպլոմավորված մասնագետի և մագիստրոսի որակավորում ունեցող ՀՀ քաղաքացիները:
9. Մագիստրատուրայի ընդունելությունը իրականացվում է ՀՀ կառավարության և պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հաստատված մասնագիտությունների անվանացանկի համաձայն:
10. Մագիստրոսի աստիճան ունեցող քաղաքացիները 2-րդ մագիստրոսական կրթություն կարող են ստանալ միայն վճարովի հիմունքներով:

